
**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

ԹՈՐՈՍՅԱՆ Տ. Ս.

Քաղաքական ինքնորոշման խնդիրը հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների համար ունի բացառիկ նշանակություն, քանզի որոշում է յուրաքանչյուր երկրի ներքին զարգացման ռազմավարությունն ու տեղն աշխարհում: Դա այն նպատակների, ուղենիշների և պարամետրերի ընտրությունն է, որոնք որոշում են ներքին և արտաքին քաղաքական զարգացումների ուղղությունը: Թեև այդ զարգացումները փոխկապակցված են և ենթակա մի շարք ընդհանուր գործոնների ազդեցության, այդուհանդերձ, գիտական ուսումնասիրությունների տեսակետից ավելի արդյունավետ է դրանց դիտարկումն առանձին-առանձին: Հայաստանի պարագայում հատուկ հետաքրքրություն է ներկայացնում արտաքին քաղաքականության հեռանկարների ուսումնասիրությունը, քանզի տարբեր պատճառներով այն գրեթե դուրս է մնացել քաղաքագիտական ուսումնասիրությունների ուշադրությունից:

Հայաստանի արտաքին քաղաքական ինքնորոշման խնդիրը չափազանց բարդ է և պայմանավորված բազմաթիվ արտաքին և ներքին գործոնների ազդեցությամբ: Ներքին գործոնների շարքին կարելի է դասել պետական, սոցիալական, քաղաքական, տնտեսական ինստիտուտների վիճակը, հասարակության հիմնական սոցիալական և քաղաքական դերակատարների երկարաժամկետ հետաքրքրություններն ու կողմնորոշումները, մշակույթը (այդ թվում՝ քաղաքական), ավանդույթները, կերպարները, արքետիպերը և այլն: Արտաքին գործոնների թվում են ժամանակակից աշխարհաքաղաքական իրավիճակը, համաշխարհային տնտեսական և քաղաքական կենտրոնների (ԱՄՆ, Եվրոպական Միություն, Ռուսաստան, Չինաստան) ուժերի հարաբերակցությունն ու դրա փոփոխության դինամիկան, դրանց հետաքրքրությունն ու քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ, տարածաշրջանային հարաբերությունները, հակամարտությունների կարգավորման գործընթացները և այլն: Ընդ որում, ուսումնասիրությունների արդյունավետության նախապայման է այս գործոնների վերաբերյալ իրական պատկերացումների ձևավորումը և, անհրաժեշտության դեպքում, հրաժարումն առաքելականացված կարծրատիպերից: Մասնավորապես, ճշգրտման կարիք ունի հայաստանյան հասարակության պատկերացումներում տիրապետող Ռուսաստան–Հայաստան հարաբերությունների կերպարը, որը զգալիորեն տարբերվում է ռուսական քաղաքական և քաղաքագիտական շրջանակներում առկա պատկերացումներից ու մոտեցումներից: Այդ շրջանակների մոտեցումները ընդհանուր

առմամբ տեղավորվում են ԱՊՀ և Ռուսաստան–Հայաստան հարաբերությունների վերաբերյալ հետևյալ դատողությունների սահմաններում.

1. 2001-ից սկսած «ԱՊՀ հիմքի վրա նախկին խորհրդային հանրապետությունների վերաինտեգրացիան այլևս չի դիտվում որպես գործնականում հնարավոր: ...ԱՊՀ գործընկերների հետ հարաբերություններում Ռուսաստանի քաղաքականությունն է այդ հարաբերությունները դարձնել պակաս ծախսատար՝ ռուսական բյուջեի համար, և առավել արդյունավետ՝ ռուսական ազգային շահերի տեսակետից»¹: ԱՊՀ տարածքում Ռուսաստանի ազդեցության լծակներն են «տնտեսական օգնությունը՝ քաղաքական լոյալության դիմաց, կառավարելի անկայունությունը՝ հակամարտությունների լուծման բանալիների պահպանումով, համագործակցության երկրների կախվածությունը ռուսական էներգակիրներից»²:

2. «Հայաստանի աշխարհագրական դիրքի պատճառով Ռուսաստանն այն դիտում է որպես Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի երկրների թուրքական ժողովուրդների երկրաքաղաքական միավորման դեմ բնական պատվար: ... Լեռնային Ղարաբաղի խնդրի չկարգավորվածությունը, բարդ հարաբերությունները Թուրքիայի և Ադրբեջանի հետ այսօր կարելի է գործոններ են Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերություններ ունենալու տեսակետից: Սակայն այդ կապը կարող է թուլանալ, եթե Հայաստանը կարողանա (որպես հիպոթետիկ տարբերակ) կտրուկ բարելավել հարաբերությունները այդ երկրների հետ, Ղարաբաղյան խնդիրը լուծվի Երևանի համար ընդունելի պայմաններով և հիմնական եվրոատլանտյան ինստիտուտների երաշխիքների պարագայում»³:

Դատողությունների այդ շարքում հետաքրքիր է նաև եվրոպական ինտեգրացիային վերաբերող հատվածը, որն ամբողջական է դարձնում պատկերը. «առաջիկա տասնամյակների ընթացքում Ռուսաստանի անդամակցությունը Եվրամիությանն ու ՆԱՏՕ-ին անհնարին է, քանի որ հակասում է թե՛ Ռուսաստանի, թե՛ եվրոպական երկրների շահերին: ... Ռուսաստան կամ Եվրոպական Միություն» երկրնորանքը ստեղծվել է արհեստականորեն»⁴:

Ու թեև արձանագրվում է, որ «Հայաստանն ընդհանուր առմամբ կողմնորոշված է դեպի զարգացման եվրոպական մոդել», սակայն, որպես ԱՊՀ եվրոպական երկրներ թվարկվում են Ուկրաինան, Մոլդովան, Բելառուսը, Վրաստանը, Ռուսաստանը: Հայաստանը հիշատակվում է որպես Ռուսաստանի դաշնակից՝ Կոլեկտիվ անվտանգության պայմանագրի անդամ մյուս երկրների շարքում: Ընդ որում, արձանագրելով, որ ինչպես այդ, այնպես էլ ԵվրԱզԷՍ «կազմակերպու-

¹ Федулова Н., Россия-СНГ: время собирать камни (Мировая экономика и международные отношения, 2006, N 1, с. 104-111).

² Арбатова Н., Станут ли страны СНГ “яблоком раздора” в отношениях России и ЕС (Мировая экономика и международные отношения, 2006, N 6, с. 15-20).

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

թյունների հիմքում չկա ո՛չ գաղափարախոսություն, ո՛չ ընդհանուր վտանգի կամ ընդհանուր ճակատագրի գիտակցում»⁵:

Հեշտ է նկատել, որ այս պատկերացումներն էապես տարբերվում են հայաստանյան համապատասխան շրջանակների մոտեցումներից: Ակնհայտ է նաև, որ այդ դատողություններն ունեն ներքին հակասություն: Սակայն շատ ավելի կարևոր է և վտանգավոր այն հանգամանքը, որ այդ դատողությունների հիմքում այն կանխավարկածն է, որ Հայաստանն այլընտրանք չունի:

Որպես «խորամանկ» և հեռանկարային այլընտրանք՝ Հայաստանի համար ժամանակ առ ժամանակ մատնանշվում է միջանկյալ դիրքն Արևելքի ու Արևմուտքի միջև: Եթե աշխարհագրական իմաստով այն կարող է քննարկման առարկա լինել, ապա աշխարհաքաղաքական առումով այդ պնդումը լավագույն դեպքում կարող է հավակնել քաղաքական առասպելի դերակատարության: Ինչպես վերջին մի քանի դարերի ընթացքում, այնպես էլ այժմ Հայաստանը Արևելքի երկրների հետ այդ մակարդակին համապատասխանող հարաբերությունների ուղղակի, շարունակական և հեռանկարային փորձ չի ունեցել և չունի՝ ո՛չ երկկողմ և ո՛չ էլ բազմակողմ (միջազգային կազմակերպությունների) մակարդակով: Դրա համար չեն կարող հիմք ծառայել նաև երկկողմ հարաբերությունները սոսկ Իրանի ու Չինաստանի հետ կամ արաբական աշխարհում հայկական Սփյուռքի առկայությամբ պայմանավորված հարաբերությունները Սիրիայի ու Լիբանանի հետ: Հայաստանը, մասնավորապես, որևէ մասնակցություն չունի Մեծ Միջին Արևելքի շրջանակներում⁶ առկա խնդիրների քննարկմանն ու լուծմանը: Նույնն է պատկերը նաև Հայաստանից արևելք և հարավ-արևելք ընկած տարածաշրջանների պարագայում: Հետաքրքիր է, որ այդ գաղափարը անցած դարի վերջին ակտիվորեն քննարկվում էր Ռուսաստանի համար, սակայն ի վերջո մերժվեց շատերի կողմից՝ որպես անհեռանկարային, քանզի վաղուց Հին Աշխարհը Արևելքի հետ համագործակցության և երկխոսության համար միջնորդի կարիք չի զգում⁷, և անգամ արևելյան մի շարք երկրներ (Ճապոնիա, Հարավային Կորեա, Թայվան, Սինգապուր և այլն) այնքան ակտիվ հարաբերություններ ունեն Արևելքի հետ, որ որոշ առումներում ավելի շուտ Արևմուտք են համարվում, քան Արևելք⁸: Ակնհայտ է, որ եթե տարածքով, հարստությամբ, դիվանագիտական հարաբերությունների զարգացած ցանցով, տրանսպորտային ուղիներով և մի շարք այլ կողմերով հույժ գրավիչ Ռուսաստանը այդպիսի «կամուրջ» դառնալու հեռանկար չունի, ապա Հայաստանի նման դերակատարության մասին խոսելը պարզապես անլուրջ է: Ավելին, Արևելք-Արևմուտք կապող օդակի դերակատարության հավակնությունները ոչ միայն որևէ հիմք չունեն, այլև խիստ վտանգավոր են, քանզի «կեղծ» այլընտրանքների

⁵ Тренин Д., Постимперский проект (НГ Дипкурьер, 2006, N 2(97), 30.01.2006, с. 9).

⁶ Control of the "Great Middle East" (<http://www.voltairenet.org/mot2301.html>), Суслов Д. В., Политика США по управлению "расширенным" Ближним Востоком (США-Канада, 2005, N 3, с. 72-89).

⁷ Чугров С., Россия и Запад: метаморфозы взаимовосприятия, М., 1993.

⁸ Загорский А., Лукас М., Россия перед европейским выбором, М., 1993.

առաջադրումը հավասարազոր է այլընտրանքի բացակայության հաստատմանը: Հաջողություն կարող է բերել միայն այն քաղաքականությունը, որի հիմքում հստակ արժեքային պատկերացումներ են և իրագործելի նպատակներ⁹:

Այդուհանդերձ, Հայաստանը, որպես հետխորհրդային տրանսֆորմացիայում գտնվող երկիր, բախվելով աննախադեպ մարտահրավերի՝ ստիպված էր լուծումներ որոնել այնպիսի բարդ խնդիրների համար, ինչպիսիք են ժամանակակից աշխարհում աշխարհաքաղաքական և աշխարհամշակութային ինքնորոշումն ու ըստ այդմ, սեփական ազգային-պետական զարգացման ռազմավարության մշակումը: Ընդ որում, ինչպես այլ ոլորտներում, պարտավոր էր հաղթահարել խորհրդային սոցիալ-քաղաքական կարգերի իներցիան և սեփական քաղաքացիներին առաջարկել նոր կենսական ուղենիշներ և արժեքային կողմնորոշիչներ¹⁰: Դա յուրաքանչյուր հասարակության մեջ պարբերաբար իրականացվող ինքնության արդիականացում չէր, այլ արմատական վերանայում: Բնականաբար, հետխորհրդային հասարակությունների համար խորքային արժեքային տրանսֆորմացիայի և ինքնության վերանայման աղբյուրներ կարող էին լինել ազգային ավանդույթն ու ավանդական աշխարհաքաղաքական կողմնորոշումը: Այդուհանդերձ, որոշ երկրների ինքնորոշման ենթատեքստում ճշգրտման կարիք ունեին «ազգային ավանդույթի» ժամանակային ընդգրկումը՝ հաշվի առնելով խորհրդային և դրա նախընթաց ժամանակաշրջանի աղավաղումները, իսկ երկրորդ բաղադրիչը տարբեր երկրների դեպքում կարող էր ունենալ միանգամայն տարբեր ազդեցություն: Հետևաբար, այդ երկրների աշխարհաքաղաքական ինքնորոշումն այնքան միանշանակ չէր, ինչպես կարող էր թվալ առաջին հայացքից: Խնդիրն ավելի էր բարդացնում այն հանգամանքը, որ այդ երկրները ստիպված էին լուծել իրենց համար աննախադեպ ևս մեկ՝ միջազգային հարաբերությունների ձևավորման խնդիր, ինչն ուներ բացառիկ նշանակություն աշխարհաքաղաքական ինքնորոշման իրագործման արդյունավետության տեսակետից, քանզի արտաքին քաղաքականությունը «պետության կողմից մրցակցող արժեքների միջև ընտրությունն է, որը նա անում է այլ դերակատարների հետ հարաբերություններում»¹¹: Ընդ որում, հաշվի առնելով, որ արդեն իսկ բարդ ու աննախադեպ հետխորհրդային տրանսֆորմացիայի գործընթացն էլ ավելի էր բարդանում առնվազն երեք կողմի՝ Ռուսաստանի, Միացյալ Նահանգների և Եվրոպական Միության շահերի, տարածաշրջանային բարդ իրավիճակի և մի շարք այլ գործոնների ազդեցությամբ: Նման բարդ քաղաքական որոշումների ընդունման ժամանակ կարող են կիրառվել տարբեր տեսություններ: Մասնավորապես, որոշումների ընդունման այն տեսությունների համար, որոնք ձևակերպված են վերլուծական մո-

⁹ Россия и Европа: тенденции развития на пороге III тысячелетия, М., 1995.

¹⁰ Лапкин В. В., Пантин В. И., Ритмы международного развития как фактор политической модернизации России (Полис, 2005, N 3, с. 44-58).

¹¹ Goldsmith B., *Observational Learning and the Formation of Foreign Policy Preferences: Testing some Fundamental Hypotheses. Paper Prepared for International Society for Political Psychology 22nd Annual Scientific Meeting, Amsterdam, 1999, 18-21 July.*

տեցումների շրջանակում¹², այս կամ այն որոշման ընդունման կամ այս կամ այն քաղաքական կուրսի ընտրման ժամանակ ալգորիթմը պարզ է. քաղաքական գործիչը ստեղծում է այլընտրանքների աստիճանակարգը՝ համադրելով երբեմն անհամաչափ արժեքներ, հաշվում է հնարավոր ելքերն ու դրանց իրականանալու հավանականությունները և ընտրում է այն, որն իրեն (իր գլխավորած քաղաքական ուժին, երկրին) առավել օգուտ կարող է բերել:

Սակայն 80-ական թթ. վերջից քաղաքական վարքի վերլուծությունների և, մասնավորապես, միջազգային և ազգային հակամարտությունների դեպքում՝ պետությունների ճգնաժամային հարաբերությունների ժամանակ ավելի ու ավելի հաճախ կիրառվում է մեկ այլ՝ հեռանկարի տեսությունը, որը մինչ այդ մի քանի տասնամյակ արդեն կիրառվում էր տնտեսագիտությունում: Քաղաքական ընտրության խնդիրը, տնտեսականի համեմատ, ունի էական տարբերություն: Տնտեսական ընտրության ժամանակ գրեթե անմիջապես կարելի է ասել՝ այն հաջող էր, թե՞ ոչ, մինչդեռ քաղաքական ընտրության արդյունքները հաճախ զգալի կարող են լինել միայն տարիներ կամ անգամ տասնամյակներ հետո: Միաժամանակ, քաղաքական այլընտրանքները զգալիորեն ավելի բարդ են և երկիմաստ: Իսկ որոշ դեպքերում, օրինակ, քաղաքական դաշնակիցների, տարածքային խնդիրների, հակամարտությունների կարգավորման պարագայում, քաղաքական այլընտրանքները գնահատելը հատկապես դժվար է (ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ այս երեք գործոնն էլ Հայաստանի դեպքում կարևոր նշանակություն ունեն):

Հեռանկարի տեսության՝ որոշումների ընդունման գործընթացի վերլուծության հոգեբանական ուղղության ներկայացուցիչներն¹³ ապացուցում են, որ ցանկացած որոշման ընդունման վրա, այլ գործոնների շարքում, ազդում են հույզերը, համոզմունքները և արժեքները, որոնք ստիպում են շեղվել վերլուծական մոտեցմամբ թելադրված ռացիոնալությունից և պատճառ են դառնում հաշվարկների և հավանականությունների գնահատման բազմաթիվ սխալների: Այս ուղղության հեռանկարների մասին է անուղղակիորեն վկայում նաև այն հանգամանքը, որ 2002 թ. Նոբելյան մրցանակը տնտեսագիտության ոլորտում շնորհվել է ամերիկացի հոգեբան Կանեմանին, որի ձևակերպած հիմնադրույթները մերժում են ռացիոնալ ընտրության պոստուլատները և կարևոր տեղ ունեն հեռանկարի տեսության մեջ:

Որոշումների ընդունման այս երկու տեսությունների ներկայացուցիչների տեսակետները բախվում են նաև արտաքին քաղաքականության պարագայում: Քաղաքական ռեալիզմի ներկայացուցիչները կարծում են, որ միջազգային ասպարեզում պետությունն ունի երկու տեսակի խնդիրներ՝ տնտեսական և ռազմական: Ոչ քիչ դեպքերում դրանց ավելացվում են նաև քաղաքական խնդիրները: Մինչդեռ հե-

¹² **Дегтярев А. В.**, *Методологические подходы и концептуальные модели в интерпретации политических решений*(1)(Полис, 2003, N 2, с. 71-81).

¹³ **Welch D. A.**, *Culture and Emotion as Obstacles to Good Judgment: The Case of Argentina's Invasion of Falklands/Malvinas.* - Renshon S. A., Larson D. W. (eds.) *Good Judgment in Foreign Policy: Theory and Application.* N. Y. 2003.

ռանկարի տեսության ներկայացուցիչների կարծիքով¹⁴, քաղաքականության մեջ գլխավոր խնդիրներն են իշխանության և ազդեցության, հաջողության հասնելու առնչակցության մոտիվները: Սակայն երկու ուղղությունների ներկայացուցիչներն էլ համամիտ են, որ պետության գործունեության հիմնական ուղղություններն են անվտանգության, բարօրության և *միջազգային հանրությանն ինտեգրման ապահովումը*: Նկատենք, որ թեև բոլոր երեք ուղղություններն էլ ներառում են արտաքին հարաբերություններին առնչվող խնդիրներ, սակայն վերջինը՝ միջազգային հանրությանն ինտեգրումը, ամբողջությամբ այդ հարաբերությունների նպատակ ու արդյունք է (անշուշտ, չմոռանալով ինտեգրման միջավայրին ներքին կյանքի համապատասխանեցման խնդիրը): Հարկ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ համաշխարհային ասպարեզում պետությունների փոխհարաբերությունների բնույթի փոփոխությունը հանգեցրել է այն բանին, որ միջազգային հարաբերություններում փակվածությունը դարձել է անհնարին և կամ աննպատակահարմար¹⁵: Հետևաբար, յուրաքանչյուր պետության արտաքին հարաբերությունների առանցքը կարելի է համարել միջազգային հանրությանն ինտեգրման քաղաքականությունը: Խնդիրն առավել ևս արդիական է հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների համար, քանի որ ԽՍՀՄ փլուզմանը հետևած այնպիսի խորքային երևույթներ, ինչպիսիք են հետխորհրդային տրանսֆորմացիան կամ «սառը պատերազմի» ավարտը, ենթադրում են ոչ միայն համակարգային (այդ թվում և միջազգային) վերափոխում, այլև նախկին կապերի և անգամ հարացույցի փլուզում¹⁶: Ընդ որում, կարևոր է ոչ միայն երկրի ինտեգրման ուղու ընտրությունը, այլև այն կերպարը, որն իր համար կերտում է պետությունը, քանզի ինտեգրումը երկու միաժամանակյա ընտրություն է ենթադրում. երկիրը ընտրում է ինտեգրման միջավայրը, իսկ միջավայրն ընտրում է (ընդունում է) երկիրը: Առաջին խնդրի լուծման համար, ըստ Վ. Լապկինի և Վ. Պանտինի, հետխորհրդային տրանսֆորմացիայում գտնվող երկրներն ի սկզբանե տեսականորեն ունեին չորս ռազմավարական այլընտրանք¹⁷.

1. ազգ-պետության կառուցում,
 2. հետխորհրդային երկրների անցման տիպի համադաշնության (կոնֆեդերացիայի) ստեղծում,
 3. միութենական պետության վերականգնում,
 4. անդամակցություն Եվրամիությանը:
- Թեև սկզբունքային տարբերակների առումով այս մոտեցումն ամբողջական է, սակայն կիրառման տեսակետից թերի է մի շարք առումներով.

¹⁴ **Winter D. G.**, *Power, Affiliation and War. Three Tests of a Motivational Model (Journal of Personality and Social Psychology, 1993, N 65/3).*

¹⁵ **Киселев И. Ю.**, *Образы государств в международных отношениях: механизмы трансформации (Полис, 2003, N 3, с. 50-57).*

¹⁶ **Murray Sh.**, *Anchors against Change: American Opinion Leader's Beliefs after the Cold War. Ann Arbor. 1996.*

¹⁷ **Лапкин В. В., Пантин В. И.**, *Ритмы международного развития как фактор политической модернизации России (Полис, 2005, N 3, с. 44-58).*

ա. որպես այլընտրանք են ներկայացվել այնպիսի մոտեցումներ, որոնք ոչ միայն միմյանց չեն հակադրվում, այլև կարող են համադրվել: Ազգ-պետության կառուցումը չի հակասում ինտեգրման գաղափարին, առավել ևս այնպիսի լայն միջակայքում, ինչպիսին «ԱՊՀ-Եվրամիություն» է: Ավելին, ազգ-պետության կառուցումն անհրաժեշտ է եվրոպական ինտեգրացիայի և ցանկալի՝ ԱՊՀ-ի պարագայում:

բ. միութենական պետության վերականգնումը կարելի է այլընտրանք համարել միայն բացարձակ տեսական քննարկումների ժամանակ, քանզի եթե այդ գաղափարը բավարար աջակցություն ունենար, ապա յոթ տասնամյակ գոյատևած ԽՍՀՄ-ը չէր փլուզվի: Մարդկության պատմության մեջ չի արձանագրվել որևէ դեպք, երբ փլուզված կառույցի փոխարեն ձևավորվում է նույնաբնույթ մեկ ուրիշը: Ռուսաստան-Բելառուս միությունը խորհրդանշական է, ավելի շուտ վկայում է ցանկությունների, քան իրողությունների մասին և չափազանց մեծ վերապահումով կարելի է համարել միութենական պետություն, քանզի համապատասխան հատկանիշներ ունեցող գործուն կառույցներ գոյություն չունեն:

գ. եվրոպական ինտեգրացիա նախաձեռնած երկրները, թեև հաճախ նպատակ ունեն անդամակցությունը Եվրամիությանը, սակայն հնարավոր չէ պնդել, որ դա եվրաինտեգրացիայի անվերապահ և միանշանակ նպատակն է: Մասնավորապես, եթե Եվրոպայի խորհրդի անդամ է 46 երկիր, ապա Եվրամիության՝ միայն 25: Ընդ որում, Եվրոպայի խորհրդի մի շարք երկրներ չեն անդամակցել Եվրամիությանը բոլորովին էլ ոչ այն պատճառով, որ չեն համապատասխանում Եվրամիության չափանիշներին: Ճիշտ հակառակը, նրանց թվում կան երկրներ (Իսլանդիա, Նորվեգիա, Շվեյցարիա, Լիխտենշտեյն), որոնք այդ չափանիշներին ավելի են համապատասխանում, քան Եվրամիության անդամ մի խումբ երկրներ (Գիպրոս, Հունգարիա, Սլովակիա, Հունաստան, Պորտուգալիա և այլն): Պատկերը կարող է ամբողջացնել Ռուսաստանի օրինակը: Կարելի է վստահորեն պնդել, որ Եվրախորհրդի անդամ այդ երկիրը ոչ միայն տեսանելի ապագայում չի անդամակցի Եվրամիությանը¹⁸, այլև գործնականում նման նպատակի ձևավորումը կարելի է բացառել, քանզի ռուսական էլիտան, անգամ «ազատվելով ԽՍՀՄ-ից», պահպանեց մեծապետական ինքնագիտակցությունը, իսկ երկրի հասարակական գիտակցության համար «գերտերություն» գաղափարն այլընտրանք չունի: Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ ի տարբերություն հետխորհրդային տրանսֆորմացիայի մի շարք երկրների, Ռուսաստանի համար անգամ «վերադարձը» նախախորհրդային շրջանի նշանակում է վերադարձ կայսերական անցյալի, որի փորձն այսօր նույնքան կիրառելի չէ, ինչքան խորհրդային փորձը: Կա ևս մեկ ակնհայտ պատճառ. Ռուսաստանը բավականաչափ մեծ է, որ անդամակցության պարագայում հավակնի Եվրամիությունում գերիշխող դիրքի, այլ ոչ թե պարզապես դառնա «եվրոպականացման օբյեկտ», բայց միաժամանակ բավականաչափ ներուժ ունեցող, որպեսզի Եվրամիության ներկայիս լիդերների համար նման հավակնությունները լինեն

¹⁸ **Тренин Д.**, *Идентичность и интеграция: Россия и Запад в XXI веке. - Pro et Contra, 2004, т. 8, N 3, с. 9-22.*

անցանկալի: Ակնհայտ է, որ եթե այլ երկրների պարագայում որոշիչ է համապատասխանությունը կոպենհագենյան չափանիշներին¹⁹, ապա Ռուսաստանի դեպքում առաջնային են բոլորովին այլ հանգամանքներ:

Ներկայացված վերապահումների պարագայում կարելի է արձանագրել, որ հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներն ունեն բազմակողմ միջազգային հարաբերությունների զարգացման երկու տարբերակ՝ ԱՊՀ կամ Եվրոպական ինտեգրացիա, և նրանց համար հնարավոր է ձևակերպել նպատակի իրականացման հետևյալ ռազմավարական այլընտրանքները.

1. ազգ-պետության ձևավորում,
2. ազգ-պետության ձևավորում և ինտեգրացիա ԱՊՀ շրջանակներում,
3. ազգ-պետության ձևավորում և Եվրոպական ինտեգրացիա ժողովրդավարական չափանիշների շրջանակում,
4. ազգ-պետության կառուցում և միաժամանակյա ինտեգրացիա ԱՊՀ և Եվրոպական ժողովրդավարական չափանիշների շրջանակներում,
5. ազգ-պետության կառուցում և լիարժեք Եվրոպական ինտեգրացիա (անդամակցություն Եվրամիությանը):

Հեշտ է նկատել, որ յուրաքանչյուր այլընտրանքի համար կարելի է առանձնացնել երկրներ, որոնք ընտրել են այս կամ այն նպատակը: Ավելին, ակնհայտ է, որ, օրինակ, Հայաստանի պարագայում տեղի է ունեցել ռազմավարական նպատակի մի քանի այլափոխում. նախ (1991-1995 թթ.) այն համապատասխանում էր երկրորդ տարբերակին, ապա անցում կատարվեց չորրորդ տարբերակին: Վերջին մի քանի տարիների ընթացքում գերակա նպատակ է հռչակվել անդամակցությունը Եվրամիությանը, այսինքն՝ անցումը հինգերորդ տարբերակին:

Ակնհայտ է, որ ռազմավարական նպատակի այլափոխումները հետխորհրդային տրանսֆորմացիայի ընթացքում անխուսափելի են, եթե ի սկզբանե երկիրը չի ընտրել հինգերորդ տարբերակը, ինչը տեղի ունեցավ բալթյան երկրների պարագայում: Քանի որ ԱՊՀ շրջանակներում ինտեգրացիայի գործընթացները շատ թույլ են, և առաջընթացի հնարավորություններն անորոշ (ուշագրավ է, որ 2005 թ. իր հայաստանյան այցի ժամանակ Ռուսաստանի Դաշնության նախագահ Վ. Պուտինը հայտարարեց²⁰, ապա կարճ ժամանակ անց կրկնեց Մոսկվայում, որ «ԱՊՀ-ն ստեղծվել էր ԽՍՀՄ քայքայման գործընթացն ավելի քաղաքակիրթ դարձնելու նպատակով»): Այդ կառույցի հեռանկարներն անգամ ամենահեռավոր եզրեր չունեն այն հեռանկարների հետ, որոնք փորձագետներն ուրվագծում են²¹ որպես Եվրոպական սոցիոմշակութային նոր մոդելի հիմնական գծեր: Այդպիսիք են. ոչ նյութական, ստեղծագործական բաղադրիչի գերակշռություն նյութական հարստության բազ-

¹⁹ The Declaration of the [European Council](http://europa.eu.int). [Copenhagen](http://europa.eu.int), June 1993. (<http://europa.eu.int>).

²⁰ **Путин В. В.**, СНГ – это весьма полезный клуб для взаимной информации, выяснения проблемных вопросов общего характера. Информационное Агентство Арминфо, выпуск 30, 25.03.2005. (<http://www.arminfo.am>).

²¹ **Иноземцев В.**, Возвращение Европы (Мировая экономика и международные отношения, 2002, N 6, с. 3-14).

մապատկման խնդիրների նկատմամբ, քաղաքական կազմակերպման նոր սկզբունքների կիրառում, որոնք առաջին հերթին կդրսևորվեն որպես ինքնիշխանության ու ժողովրդավարության ինստիտուտների բազմամակարդակ համակարգերի ձևավորում, գլոբալիզացիայի մարտահրավերների հաղթահարման մեխանիզմների ստեղծում, սեփական հասարակության, ինչպես նաև այլ ժողովուրդների ու երկրների նկատմամբ հանդուրժողականության ու բոնությունից զերծ միջազգային հարաբերությունների ծավալման քաղաքականության նկատմամբ հավատարմություն:

Ակնհայտ է, որ նման միջավայրը հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների համար ոչ միայն ցանկալի է, այլև անխուսափելի է դարձնում հետևությունը, որ երկրորդ և չորրորդ տարբերակները ժամանակավոր բնույթ ունեն և կարող են դիտվել միայն որպես միջանկյալ նպատակներ: Առավել ևս, որ ԱՊՀ-ն այլընտրանք չի կարող դառնալ առնվազն երեք հանգամանքի պատճառով.

- ԱՊՀ-ն չունի կրող գաղափար, այն ո՛չ արժեքների միություն է, ո՛չ էլ շահերի,
- Ռուսաստանը չունի ինտեգրացիայի համար անհրաժեշտ կարողունակություն և ձգող քաղաքական-մշակութային ազդեցություն իր գործընկերների վրա,
- ԱՊՀ երկրներում իրականացվող վերափոխումների միմյանցից էապես տարբերվող բնույթն ու տեմպերն անհնարին են դարձնում ինտեգրացիայի կարևոր բաղադրիչներից մեկի՝ միասնական տնտեսական կանոնների շրջանակում համագործակցության իրականացումը:

ԱՊՀ-ի անհեռանկարայնության հաստատման ևս մեկ դրսևորում է այդ տարածքում զանազան տարածաշրջանային առանցքների (ՎՈԻԱՄ և այլն) ստեղծումը: Դրա վկայությունն է նաև ԱՊՀ ապագայի նկատմամբ հոռետեսական մոտեցումների խորացումը տարբեր հարթություններում: ԱՊՀ առանցքը հանդիսացող Ռուսաստանի քաղաքացիներն այդ կազմակերպության ստեղծումից 15 տարի անց զգալիորեն ավելի քիչ են հավատում, որ Ռուսաստանը պետք է ձգտի ամրապնդել ԱՊՀ-ն²², քան սկզբում, իսկ նրանց 77 տոկոսը կարծում է, որ ավելին անել, քան արվում է, չարժե: Վերլուծություններն էլ հաստատում են, որ Ռուսաստանի՝ «ԱՊՀ երկրների հետ ռազմավարական գործընկերության հաստատման» նպատակը որևէ գործնական զարգացում չի ունեցել²³ և չի էլ կարող ունենալ առանց համապատասխան մշակումների և համագործակցության ներդաշնակ ու գործուն մեխանիզմների: Դրանց բացակայության պարագայում լավատեսական շեշտադրումները²⁴ թերևս կարելի է միայն բարի ցանկությունների շարքին դասել: Իհարկե, ԱՊՀ-ն դեռևս օգտակար կառույց է գործնական խնդիրների համակարգման և այդ տարածքում հակամարտությունների վերաբերյալ կարծիքների փոխանակման համար, թեև ակնհայտ է, որ դրանց մի մասն արդեն դուրս է եկել (օրինակ, Ղարաբաղյան խնդիրը) տարածաշրջանային կարգավորման շրջանակներից: Սակայն որպես

²² Кертман Г. Л., СНГ: между прошлым и настоящим (Полис, 2005, N 6, с. 110-125).

²³ Годин Ю., Квaziинтеграция в СНГ и национальная безопасность России (Мировая экономика и международные отношения, 2004, N 12, с. 46-51).

²⁴ Киреева С. А., Интеграционная политика СНГ (Право и политика, 2004, N 1, с. 107-118).

հետխորհրդային տարածքում տարածաշրջանային ինտեգրացիայի ինստիտուտ կամ վերտարածաշրջանային քաղաքական, տնտեսական կամ ռազմական գործոն, ԱՊՀ-ն չի կայացել և կայացման հիմքեր չունի²⁵:

Միջազգային հարաբերություններում ռազմավարական նպատակի սահմանումը, անգամ եթե այն այլընտրանք չունի, ինքնին չի կարող ապահովել այդ նպատակի իրականացումը: Ավելին, դրա համար դեռևս բավարար չեն ծրագրի առկայությունն ու կամքը: Ըստ Վ. Լապկինի և Վ. Պանտինի՝ 20-րդ դարի փորձը ցույց տվեց, որ հաջող արդիականացման համար անհրաժեշտ է երկու գործոն²⁶.

- արդիականացվող հասարակության ներքին պատրաստվածությունը խոր քաղաքական բարեփոխումներին, որը պետք է սահմանափակի բյուրոկրատիայի իշխանությունն ու համապատասխան խաղի կանոններ ձևավորի հիմնական քաղաքական դերակատարների համար,

- աշխարհի առավել զարգացած երկրների՝ այդ հասարակությանն արդյունավետ քաղաքական ու տնտեսական աջակցություն ցուցաբերելու ցանկությունն ու կարողությունը՝ մեղմելու համար անցկացվող բարեփոխումների ծանր հետևանքները:

Այդուհանդերձ, անգամ այդ պայմանների ապահովման դեպքում քաղաքական ինքնորոշումն անվերապահորեն ենթադրում է քաղաքակրթական ինքնորոշում²⁷: Քանզի, ըստ Ս. Հանթինգտոնի, մտայնությունը, որ «արևմտյան քաղաքակրթությանը չպատկանող ժողովուրդները պետք է ընդունեն արևմտյան արժեքները, ինստիտուտները և մշակույթը, անբարոյական է իր հետևանքներով, քանզի արդիականացումն ու տնտեսական զարգացումը չեն պահանջում մշակութային արևմտականացում և դրան չեն հանգեցնում: Ընդհանուր դեպքում եվրոպական (արևմտյան) ուղու ընտրությունը չի կարող լինել միակ և անգամ ճիշտ ճանապարհը»²⁸: Ուղու ընտրությանը պետք է նախորդի պատմամշակութային ինքնության (քաղաքակրթական հոսքում սեփական տեղի) ճշտումը:

Հետևաբար, հետխորհրդային տրանսֆորմացիայի ընթացքում առանցքային նշանակություն է ստանում ինքնանույնացման երկու՝ ներքին (ինքնության արդիականացում ու ամրապնդում) և արտաքին (միջազգային ինտեգրացիա) չափումների համադրման խնդիրը: Մինչդեռ ուսումնասիրությունները, գրեթե առանց բացառության, միմյանց հակադրում են դրա երկու հիմնական գործընթացները. ըստ Վ. Լապկինի և Վ. Պանտինի՝ ազգային-պետական հարացույցի համապարփակ ճգնաժամի գիտակցումը ռուսական հասարակությունը երկատել է ազգային արժեքների արդիականացման անհրաժեշտության և համաշխարհային զարգացման

²⁵ **Тиммерман Х.**, *Процессы дезинтеграции и реорганизации СНГ (Мировая экономика и международные отношения, 1998, N 12, с. 41-46).*

²⁶ **Лапкин В. В., Пантин В. И.**, նշվ. աշխ., էջ 44-58:

²⁷ **Факторы политического самоопределения России в современном мире (Мировая экономика и международные отношения, 2006, N 6, с. 39-49).**

²⁸ **Хантингтон С.**, *Запад уникален, но не универсален (Мировая экономика и международные отношения, 1997, N 3, с. 84-93).*

միտումների միջև²⁹։ Ի հետևանս դրա, հիմնախախտվել է ինքնության ազգային և քաղաքակրթական բաղադրիչների միասնականությունը։ Մինչդեռ դրա վերականգնումից է հիմնականում կախված ազգային պետականության և կայուն զարգացման հեռանկարը³⁰։ Ինքնության արդիականացման ու պահպանման և ինտեգրման գործընթացի փոխազդեցությունների բնույթը (հակադրություն, թե՛ համադրություն), ինչքան էլ առաջին հայացքից միանշանակ թվա, այդուհանդերձ, կարոտ է լուրջ ուսումնասիրության երկու ուղղությամբ՝

- ի՞նչ է ինտեգրումը. որոշ ժամանակահատվածում ընդհանուր քաղաքակրթական զարգացումներից դուրս մնացած երկրների վերադարձի՞, թե՛ տարբեր քաղաքակրթական նախահիմք ունեցող երկրների համախմբման բարդ և հակասական գործընթաց։ Եթե ճիշտ է հարցադրման առաջին մասը, ապա ամեն կոնկրետ դեպքի համար կարևոր նշանակություն է ստանում հաջորդ հարցադրումը.

- արդյո՞ք ինտեգրման հաջողությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե ինտեգրման հայտ ներկայացրած երկիրը պատկանում է այն քաղաքակրթական համակարգին, որին ցանկանում է ինտեգրվել։

Եթե անգամ առաջին հարցադրման երկրորդ մասը տեսականորեն չի կարելի ժխտել, ապա այդ դեպքում ինտեգրումը կուղեկցվի անհամեմատ ավելի մեծ բարդություններով։ Ի վերջո, ինտեգրումը որոշակի արժեքների յուրացում և տեղայնացում է որևէ հասարակության ու երկրի կողմից՝ զարգացման առավել բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով, ինչն ընդհանուր քաղաքակրթական նախահիմքի պարագայում ավելի հեշտ է իրականացնել։

Ակնհայտ է, որ երկրորդ հարցադրման հավաստիության պարագայում ինտեգրման և ինքնության ամրապնդման ու պահպանման գործընթացները ոչ միայն հակոտնյա չեն, այլև փոխադարձաբար նպաստավոր են, քանի որ այդ դեպքում ինտեգրումը պարզապես շեղման փուլում աղավաղված արժեքների վերականգնումն է կամ այդ փուլի ընթացքում ձևավորված նոր քաղաքակրթական բաղադրիչների յուրացումը³¹։ Ընդ որում, դրանք ինքնուրույն, չհատվող հետազոտվող ծավալվող գործընթացներ չեն, այլ մեկ միասնական քաղաքակրթական հոսքի տարբեր, սակայն օրգանապես փոխկապված եզրեր։

Հետևաբար, այնպիսի գործընթացների ժամանակ, ինչպիսին է հետխորհրդային տրանսֆորմացիան, երբ նախընթաց ժամանակահատվածում մեկ միության մեջ միավորված են եղել բոլորովին տարբեր հետազոտ ունեցած և անգամ տարբեր քաղաքակրթությունների պատկանած երկրներ ու ժողովուրդներ, այդ միության քայքայումից հետո նորանկախ երկրների հետագա ընթացքը որոշող մեկնակետը պետք է լինի այն «տեղը», որտեղ նրանք գտնվել են մինչև միավորման գործընթացը,

²⁹ **Лапкин В. В., Пантин В. И.**, *Восприятие институтов и ценностей в постсоветском пространстве: опыт Украины и России (Полис, 2004, N 1, с. 74-88).*

³⁰ **Семененко И. С.**, *Культурные факторы и механизмы формирования российской национальной-цивилизационной идентичности на рубеже XXI в. (Полис, 2004, N 1, с. 101-114).*

³¹ **Թորոպյան Տ.**, Ինքնության պահպանման խնդիրները հետխորհրդային տրանսֆորմացիայի գործընթացում (Լրաբեր հասարակական գիտությունների, 2000, N 1, էջ 3-21):

այսինքն՝ հետագա ընթացքի ճշտման համար անհրաժեշտ է նախ վերադարձ սեփական արմատներին (ինդիգենիզացիա):

Քաղաքական արդիականացում նախաձեռնած երկիրը չի կարող հաշվի չառնել ևս մեկ հանգամանք, որի մեխանիզմները թեև լիովին ուսումնասիրված չեն, սակայն այդ գործոնի ազդեցությունն ակնհայտ է: Խոսքը համաշխարհային քաղաքական և տնտեսական զարգացումների ռիթմերի մասին է³²: Թեև քաղաքական մոդեռնիզացիայի վրա այդ ռիթմերի ազդեցության մեխանիզմներն առայժմ լիարժեք ուսումնասիրված չեն, սակայն այդ ազդեցությունն ավելի քան ակնհայտ է³³: Այդ ռիթմերի դրական և բացասական ալիքները գրեթե հավասար տևողությամբ (20-30 տարի) հաջորդում են միմյանց: Աղյուսակ 1-ում բերված է համաշխարհային ռիթմերի փուլերի (ըստ քսաներորդ դարի խոշորագույն տնտեսագետներից մեկի՝ Ն. Կոնդրատևի³⁴) և ռուսական կայսրությունում, ապա նաև Խորհրդային Միությունում իրականացված բարեփոխումների ու դրանց հաջորդած հետընթացների համադրումը³⁵: Քանի որ 1828 թվականից Արևելյան Հայաստանը եղել է Ռուսաստանի կազմում, ապա կարելի է համարել, որ աղյուսակի երկրորդ սյունակում բերված գործընթացներն էական ազդեցություն են ունեցել նաև (Արևելյան) Հայաստանում իրադարձությունների զարգացումների վրա: Թեև առանձին ուսումնասիրության առարկա կարող է լինել նաև ներքին՝ հայաստանյան զարգացումների համադրումը համաշխարհային և ռուսաստանյան ռիթմերի հետ:

Ռիթմերի ճանաչումն ու գնահատումը կարևոր է մի շարք նկատառումներով: Նախ, յուրաքանչյուր երկրում արդիականացման հաջողությունը մեծապես կախված է այն հանգամանքից, թե այդ գործընթացը համաշխարհային ռիթմերի ո՞ր փուլի ընթացքում է իրականացվում: Երկրորդ նկատառումը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրական ալիքին հաջորդող բացասական ալիքը միշտ հակված է խարխուլելու նախորդի ընթացքում ունեցած ձեռքբերումները:

Աղյուսակ 1

Համաշխարհային ռիթմերի կապը Ռուսաստանում իրականացվող բարեփոխումների հետ

³² Ритмы и циклы политического развития (Полис, 2002, N 4, с. 18-59). Пантин В. И., Лапкин В. В., *Философия исторического прогнозирования: ритмы истории и перспективы мирового развития в первой половине XXI века*, Дубна, 2006.

³³ Хантингтон С. *Третья волна. Демократизация в конце XX века*, М., 2003, Лапкин В. В., Пантин В. И., *Ритмы международного развития как фактор политической модернизации России* (Полис, 2005, N 3, с. 44-58).

³⁴ Кондратьев Н. Д., *Проблемы экономической динамики*, М., 1989.

³⁵ Лапкин В. В., Пантин В. И., *Ритмы международного развития как фактор политической модернизации России*, с. 44-58.

Փուլեր	Կոնդրատյան ալիքներ	Բարեփոխումներն ու հետընթացները Ռուսաստանում
I	Բարձրացող ալիք 1780-ականի վերջ 1790- ականի սկզբից մինչև 1810-1817 թթ. Իջնող ալիք 1810-1817-ից մինչև 1840-ականի վերջ-1850- ականի սկիզբ	Ալեքսանդր I-ի բարեփոխումներ 1802-1803 թթ.- բարեփոխումներ 1809-1810 թթ.-Սպերանսկու բարեփո- խումների նախագիծ Նիկոլայ I-ի հակաբարեփոխումներ 1825-1855 թթ.
II	Բարձրացող ալիք 1840-ականի վերջ-1850- ականի սկզբից մինչև 1870-ականի սկիզբ Իջնող ալիք 1870-ականի սկզբից մինչև 1890-ականի կեսը	Ալեքսանդր II-ի բարեփոխումներ 1860-ականներ-1870 թթ. սկիզբ, «Մեծ բա- րեփոխումներ» Ալեքսանդր III-ի հակաբարեփոխումներ 1881-1892 թթ.
III	Բարձրացող ալիք 1890-ականի կեսից մինչև 1914-1920 թթ. Իջնող ալիք 1914-1920 թթ. մինչև 1940-ականի կեսեր	Վիտտե-Ստոլիպինի բարեփոխումներ 1893-1911 թթ. Ամբողջատիրության ծնունդն ու ծաղկու- մը 1917 թ.-1950-ականի սկիզբ
IV	Բարձրացող ալիք 1940-ականի կեսից մինչև 1960-ականի վերջ- 1970-ականի սկիզբ Իջնող ալիք 1960-ականի վերջ-1970- ականի սկզբից մինչև 1980-ականի սկիզբ	Խրուշչով-Կոսիգինի բարեփոխումներ 1956-1968 թթ. Բրեժնև-Սուսլովի «ճահճացում» 1968-1982 թթ.

Հետևաբար, ունենալով յուրաքանչյուր ալիքի մոտավոր տևողության գնահա-
տականը՝ անհրաժեշտ է այնպես պլանավորել և իրականացնել արդիականացու-
մը, որ դրական ալիքի ավարտին բարեփոխումներն ունենան անդառնալի ընթացք,
և բացասական ալիքի ազդեցությունը չունենա այլասերող բնույթ: Ակնհայտ է, որ
դա վերաբերում է նաև հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների արդիակա-
նացման գլխավոր բաղադրիչին՝ երկրի ինտեգրացիային միջազգային հանրությա-
նը: Հետևաբար, կարևոր է ոչ միայն ինտեգրացիայի ռազմավարական նպատակի
ճիշտ ընտրությունը, այլև դրա իրականացումը բարենպաստ ալիքներին համըն-

թաց, ինչը կապահովի արդիականացման վերոհիշյալ երկրորդ բաղադրիչի արդյունավետությունը:

Հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների ռազմավարական նպատակների (այլընտրանքի) գնահատումը կամ, որ նույնն է, արտաքին հարաբերությունների գլխավոր ուղղությունները թե՛ ըստ Լապտինի-Պանտինի քառատարբերակ մոդելի, թե՛ ըստ առաջարկվող վերանայված մոդելի, վկայում է, որ դրա հնարավորությունները խիստ սահմանափակ են: Ավելին, քաղաքակիրթ ապահարգանի «ԱՊՀ» ծրագրի ավարտն ի վերջո հանգեցնելու է երկու տարբերակի. Ռուսաստանի «արբանյակ-պետություն» կամ Եվրամիությանն անդամակցած (անդամակցող) ազգ-պետություն: Հետխորհրդային տրանսֆորմացիայի ընթացքը՝ թևակոխումը երկրորդ փուլ³⁶, «անցումային» երկրների թվի էական կրճատումը, ինչպես նաև այն հանգամանքը, որ մոտենում է հերթական բարձրացող ալիքի ավարտը, հաստատում են, որ հետխորհրդային, այդ թվում և միջազգային հարաբերությունների տրանսֆորմացիան (մասնավորապես՝ միջազգային ինտեգրացիան) ավարտելու համար այդ պետություններին մնացել է ընդամենը 5-6 տարի բարենպաստ ժամանակ: Այդ ընթացքում անհրաժեշտ է ավարտել գործընթացը կամ առնվազն այն դարձնել անդադնալի: Հակառակ դեպքում ոչ միայն անհրաժեշտ կլինի ևս 20-30 տարի սպասել բարենպաստ ժամանակի, այլև չի բացառվում ձեռքբերումների այլալսերումը: Այն, ինչ, մասնավորապես, տեղի ունեցավ Վիտտե-Ստոլիպինի բարեփոխումներին հաջորդած անկման ժամանակահատվածում, երբ այլալսերվեցին 20-րդ դարասկզբի ռուսական կուսակցությունների, ընտրությունների և պառլամենտարիզմի դեռևս լիովին չկայացած ինստիտուտները:

Արդիականացման գլխավոր՝ ինտեգրման բաղադրիչի նպատակն ընտրած երկրի համար հաջորդ քայլն արտաքին հարաբերություններում պետության կերպարի ձևավորումն է: Քաղաքականության վարումը, որը հիմնված է սոսկ սեփական կերպարի ներքին ընկալումների վրա, առանց հաշվի առնելու «հակադարձ կապի» ազդանշանները, հղի է լուրջ բարդություններով: Այսպես կոչված իմիջային քաղաքականությունը³⁷ լրացնում, երբեմն էլ փոխարինում է ուժային քաղաքականությունը: Խնդրի կարևորությունը հստակ երևում է, մասնավորապես, երբ համեմատվում են Հայաստանի և Վրաստանի ձեռքբերումները եվրոպական ինտեգրացիայի ճանապարհին (Եվրոպայի խորհրդին անդամակցելիս ստանձնած պարտավորությունների և հանձնառությունների կատարման ընթացքը) և եվրոպական կառույցների պատկերացումներում ձևավորված երկու երկրների կերպարները համեմատելիս: Թեև Վրաստանն անդամակցել է Եվրոպայի խորհրդին երկու տարի ավելի շուտ, քան Հայաստանը, և Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ պարտավորությունների կատարմանը վերաբերող վերջին բանաձևերն էլ ընդունվել են ավելի քան մեկ տարվա տարբերությամբ (Հայաստան՝ 2004 թ. հոկտեմ-

³⁶ **Թորոսյան Ս.**, Հետխորհրդային տրանսֆորմացիա. պարադիգմի վերանայում կամ երկրորդ փուլ (Լրաբեր հասարակական գիտությունների, 2005, N 2, էջ 3-12):

³⁷ **Tehrani M.**, *Global Communication and World Politics: Domination, Development and Discourse*. Boulder, CO, 1999.

բեր, Վրաստան՝ 2006 թ. հունվար), սակայն դրանց վերլուծությունն ակնհայտորեն վկայում է, որ Հայաստանն անհամեմատ ավելի հաջող է կատարել պարտավորությունները, քան Վրաստանը³⁸: Մինչդեռ եվրոպական կառույցների վերաբերմունքը այլ է: Միամտություն կլինի դա բացատրել միայն վրացական «վարդերի» հեղափոխությանը մատուցվող տուրքով: Եվս մեկ ցայտուն օրինակ է Ադրբեյջանի և Հայաստանի կերպարների ընկալումների արմատական փոփոխությունը նույն խնդրի՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կապակցությամբ, մինչ բեկումը դարաբաղյան պատերազմում (1993 թ.) և դրանից հետո:

Ըստ Ի. Կիսելյովի և Ա. Սմիրնովայի³⁹, արդյունավետ արտաքին հարաբերություններ իրականացնելու համար պետությունը պետք է ձևավորի և ներկայացնի իր ԵՄ-կերպարը, որի բաղադրիչներն են՝

1. ինքնությունը, որը պետության արժեհամակարգն է և ապահովում է ժառանգականությունը իշխանության փոփոխության ժամանակ,

2. պետության կարգավիճակը (տեղը) ձևավորված միջազգային հարաբերություններում,

3. դերակատարությունը, որը ղեկավարը (ղեկավարները), ինքնության ու կարգավիճակի հիման վրա, նախատեսում է պետության համար:

Ինչ վերաբերում է արտաքին քաղաքականության գնահատմանը, ապա կիրառվող մեթոդիկան⁴⁰՝ Ս. Ուոքերի «Բայը ենթատեքստում» (VICS) համակարգը, թույլ է տալիս գնահատել միջազգային հարաբերություններում տեղի ունեցած այս կամ այն իրադարձության ժամանակ ընդունված որոշումներում նկարագրված մոդելի բաղադրիչների կշիռը (այդ թվում և հույզերի, համոզմունքների և այլն): Արդեն կատարված իրադարձությունների վերլուծությունը կարող է հետագա զարգացումներում կամ նմանատիպ իրավիճակներում ընդունվող որոշումների ճշգրտման լավ հիմք լինել: Ընդ որում, անկախ այն բանից՝ փոխվել է և արդյոք դերակատարները, թե՛ ոչ:

Այսպիսով, հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների հիմնախնդիրներից մեկն արտաքին հարաբերությունների առաջնահերթությունների ընտրությունն է կամ աշխարհաքաղաքական ինքնորոշումը: Հայաստանի պարագայում բազմակողմ հարաբերությունների մի քանի տեսական այլընտրանքների շարքում ակնհայտորեն նախընտրելի է եվրոպական ինտեգրացիան՝ մի քանի տարբերակով: Միաժամանակ, նման ընտրության ակնհայտությունը չի կարող ինքնաբերաբար ապահովել այդ նպատակի իրագործումը կամ անգամ երկրի ընթացքն այդ ուղիով: Այդ նպատակի իրականացումը պահանջում է հստակ ծրագրի առկայությամբ:

³⁸ PACE Resolution 1477 (2006) on the Implementation of Resolution 1415 (2005) on the Honouring of Obligations and Commitments by Georgia.

³⁹ Kiselev I, Smirnova A., *La Dinamica de la Autoimagen de los Estados Unidos a Traves de los Discursos Publicos.-Psicologia Politica*, 2004, N 28, p. 39-47.

⁴⁰ Walker S. G., Schafer M., Young M. D., *Systemic Procedures for Operational Code Analysis: Measuring and Modeling Jimmy Carter's Operational Code.- International Studies Quarterly*, 1998, N 42, p. 21-28.

յուն և դրա իրագործում: Ընդ որում՝ սահմանափակ ժամանակահատվածում, քանզի գործընթացի ձգձգումը ոչ միայն դանդաղեցնում է նպատակի իրագործումը, այլև կարող է այլասերել ստեղծվող կառույցները:

АЛЬТЕРНАТИВЫ ФОРМИРОВАНИЯ МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЙ В ПРОЦЕССЕ ПОСТСОВЕТСКОЙ ТРАНСФОРМАЦИИ

ТОРОСЯН Т. С.

Резюме

Одной из важнейших проблем для стран постсоветской трансформации является проблема приоритета внешних сношений или геополитического самоопределения.

Для Республики Армении в ряду теоретических альтернатив многосторонних отношений следует отдать предпочтение некоторым вариантам европейской интеграции. В то же время очевидность подобного выбора сама по себе не может способствовать осуществлению этой цели или развитию страны в данном направлении. Реализация этой цели требует наличия четкой программы и ее претворения в жизнь в самые ограниченные сроки, ибо затягивание данного процесса может извратить создаваемые структуры.